ՄԱՀՎԱՆ ՈՒ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՕԼԴԻՆԳՏՈՆԻ «ՀԵՐՈՍԻ ՄԱՀԸ» ՎԵՊՈՒՄ *

Մարիամ Սիրունյան

Բանալի բառեր՝ պատերազմ, «կորուսյալ սերունդ», լինել-չլինելու դիլեմա, կյանքի անիմաստություն, ինքնության կորուստ, ինքնասպանություն, մահ, հոգեբանական պրոբլեմ:

Կյանքի անիմաստության գիտակցման, ապագայի տագնապի ու ապրելու անկարողության հետ բախումը «կորուսյալ սերնդի» կարևորագույն պրոբլեմներից են դառնում: Օլդինգտոնի հերոսը՝ Ջորջ Ուինթերբորնը, բացառություն չէր: Անցնելով պատերազմի դառն ընթացքով, հաղթահարելով ֆիզիկահոգեբանական բազում դժվարություններ՝ հերոսն ի վերջո կանգնում է լինել-չլինելու անլուծելի դիլեմայի առջև՝ շարունակել պայքարի վերածված կյանքը, փորձել հավատալ անորոշ, իր սերնդի համար դեռ չսկսված, բայց ավարտված թվացող ապագային, թե վերջ տալ կյանքին, ընտրել ինքնասպանությունն իբրև փրկության, ազատագրման միջոց: Մեր նպատակն է ինքնասպանության վերաբերյալ սոցիոլոգիական, փիլիսոփայական, հոգեբանական տեսությունների հետ համեմատության համատեքստում օլդինգտոնյան հերոսի հոգեվիճակի ու գործելակերպի բնույթը բացահայտել ու անձամբ իր՝ Օլդինգտոնի կոնցեպտը, որը գրականագետների կողմից առանձնակի ուշադրության չի արժանանում: Թե՛ անգլիացի և թե՛ ռուս գրականագետները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են «Հերոսի մահը» վեպի քննությանը, գրեթե միշտ իրենց խոսքը եզրափակում են հերոսի՝ ինքնասպան լինելու իրողության հիշատակմամբ կամ հավաստմամբ: Ստացվում է՝ վեպի քննության հիմնական «երակը» կենտրոնացնում են այդ կետի վրա՝ հուզական որոշակի շեշտեր դնելով կամ թե այդ դրվագով վեպի ավարտն ու պատումը վարողի գաղափարաբանությունը և ասելիքն ամբողջացնելով, կողմնորոշելով, ընդ որում՝ չխորանալով վեպի մանրամասն քննության ու հատկապես հերոսի հոգեբանական զարգացումների վրա: Այսինքն՝ նրանց նշած հերոսի ինքնասպանությունը մնում է տպավորության կամ ենթադրության սահմանում, հատկապես, երբ անտեսվում է պատումը վարողի՝ հենց վեպում առկա երկմտանքը կամ խոսքը, որը այս հարցի պատասխանը միանշանակության չի տանում:

Այս տարիները, որոնք պետք է իր ստեղծագործական ողջ ուժերի ծաղկման ժամանակը լինեին... եթե նույնիսկ նա ողջ մնա պատերազմից հետո, նա անհուսալիորեն հետ կմնա իր՝ չկռված հասակակիցներից և նրանք, որոնք ավելի երիտասարդ են, առանց ջանքի, իրեն կգերազանցեն, դառը միտք էր... ինքն այլևս չի ապաքինվի... գիտակցում էր, որ օրեցօր միտքը մթագնում է, մի տեսակ բթանում: Սա հերոսի հոգեմարմնավոր վերափոխման ընթացքն էր կանխորոշում:

Իրեն մռայլ մտքերն էին համակում, ամեն ինչ մութ ու անհույս էր թվում, անձնական կյանքը փոշիացավ, բանակում իր կարգավիճակը՝ ավելի վատ, քան երբևէ, զինակից զորքերը նորից ու նորից նահանջում էին և թվում էր՝ պատերազմը կտևի հավերժ և նույնիսկ եթե ինքը փրկվի, երբեք ուժը չի հերիքի նոր կյանք սկսելու: Իրակա-

---

* Հոդվածն ընդունվել է 20.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., դոցենտ՝ Տիգրան Սիմյանը:

նությունը դարձել է գրեթե անտանելի Ջորջի հոգեբանության համար, ինչպես նաև Ֆրեդի, որը չէր զգում անցյալը, չէր ցանկանում ապագան. «Նա ընդունակ չի առհասարակ ինչ-որ բան ցանկանալու, որը դուրս է գալիս տվյալ իրավիճակի սահմաններից կամ կյանքի կայունացման ավտոմատիզացումից: Իր համար «միևնույն է»[1]: Ջորջի համար միևնույն էր դարձել ամեն բան, նույնիսկ սեփական անձի փրկությունը: Նա ուղղակի ինքնաբերաբար հանձնվում է, Ֆրեդերիկը ինքնապահպանման բնազդով փախուստի է մատնվում: Նա չի ուզում այդ անիմաստ ու ոչնչով չարդարացված սպանությունների զոհն ու մասնակիցը լինել: Ինքը իր մեղքը չի տեսնում և չի ուզում իր կյանքով պատասխան տալ ուրիշների հիմարությունների համար:

Անչափելի հոգնություն. այս ամենը նրան մահվան եզրին է կանգնեցնում և միայն իրեն տիրապետելու հպարտությունն ու սովորությունն էին օգնում նրան դիմանալու:

Ձգվում էին օրերը, շաբաթները, ամիսները, Ուինթերբորնը ապրում էր զառանցանքի մեջ, ինչ էլ տեսներ, ինչ էլ լսեր, ուղեղում միայն մի բան էր պտտվում՝ Մահ, Մահ, Մահ: Կռվի դաշտում ամենուր ոչնչացում ու մահ, թվում էր դրանք մտել են իր մեջ ու այժմ երակներով թունավորված արյուն է հոսում: Նա ապրում էր դիակների մեջ, մնացորդների կողքին, դժոխային գերեզմանոցում, հերոսի հոգին էլ ասես դիակացել էր[2]:

Ես-ի, ինքնության կորուստ, մարդը կորցնում է ինքն իրեն. սա ֆիզիկական կորուստ չէ, սա ավելի զորեղ է: Պատերազմի անիմաստությունը միաժամանակ միջոց է դառնում սեփական գոյի ու առհասարակ կյանքի անիմաստությունը զգալու՝ ինքնասպանության: Կորուսյալ սերնդի ողբերգականությունը ոչ միայն պատերազմ երևույթը զգալու, ապրելու մեջ է, այլև իրենց աշխարհի, մարդկության մասնիկը չզգալու մեջ, կյանքն ու նոր աշխարհը շրջանցել են նրանց, ուր ստիպված են վերադառնալու: Նոր իրականությունը մերժելի է իրենց համար, այդ իրականությունն էլ փոխադարձաբար մերժում է իրենց: Իրենք չեն կարողանում ինտեգրվել այդ նոր իրականություն, որովհետև այդ իրականությունը անտեղյակ է պատերազմից, իրենք տեղ չունեն մի իրականության ներսում, որը չի ապրել պատերազմի սարսափը, հետևաբար չի կարող հասկանալ իրենց, իրենց ողբերգությունը:

Այս սերունդն այլևս անզատելի է պատերազմից և դա է՛լ ավելի է սրում նրանց ողբերգականությունը: Զինվորները մարդկայնորեն «ամենամեծ ողբերգությունն» էին ապրում ըստ Բարբյուսի, պատերազմը դժոխք էր, մարդկային տառապանք, որին պետք է վերջ տալ. «Նրանք զինվորներ չեն, նրանք մարդիկ են: Արկածներ որոնողներ չեն, ջարդի համար ստեղծված մարտիկներ չեն, մսագործներ չեն, չորքոտանիներ չեն, ուղղակի մարդիկ են»[3]: Զինվորների ճակատագրի ողբերգականությունը (Հատկապես Բերտրանի գումարտակի բնաջնջումից հետո), ինչպես Օլդինգտոնի նկարագրած այն ծանր մարտից հետո, երբ ահռելի կորուստներ են ունենում, Բարբյուսի պատումը, ինչպես և Օլդինգտոնինը զայրույթի, հիասթափության, վհատության, անիմաստության զգացման տարատեսակ տրամադրություններով է համակվում. «Կռվելը հիմարություն է, հիմարություն, կրկնում էին զինվորները.... Մարդիկ ստեղծվել են, որպեսզի ամուսիններ լինեն, հայրեր, մարդիկ, ոչ թե գազաններ, որոնք ատում են մեկը մյուսին, թունավորում են, հոշոտում» [4]: Բայց, ի տարբերություն Օլդինգտոնի հերոսի, որը ընկճվում է, գնում «կամավոր նահանջի», Բարբյուսի զինվորներն ամեն ինչ անում են, որ պատերազմի կրակն այրի հին աշխարհը (խոսում է ընկերերի անունից՝Պարադի, Վոլպատ, Լամյուզ, Բարկ, Տիրետ՝ հիմք դարձնելով նրանց պատմությունը). «Հեղափոխական գիտակցման ձևավորումը դառնում է «Կրակ» վեպի սոցիալական ընդդիմությունը» [5],- իրավացիորեն նշում է Մելիք Սարկիսովան:

Օլդինգտոնը մահվան անլուծելի հանելուկ է դարձնում Ջորջի մահը՝ ասես ինքն էլ պատասխանը չունենալով. «Ջորջը, եթե կհամաձայնեք ինձ հետ, 26 տարեկանում ինքնասպան եղավ»[6], բայց, այնուամենայնիվ, Ջորջի մահն ինքնասպանություն որակելը կասկածահարույց է, ինչից խուսափում է նաև պատումը վարողը, դրանում ստորև կհամոզվենք:

Պատումը վարողի ներկայացմամբ՝ հերոսներն այն հոգեբանական վիճակում էին, որ ինքնասպանությունն անխուսափելի էր, հասկանում էին, որ մեղավոր են, ինչը ևս դրդում էր ինքնասպանության. «Մենք պարտավոր ենք մեր մեղքը քավել մեռյալների առաջ, սպանված զինվորների, նրանք չեն դա պահանջում, այլ մեր մեջ ինչ-որ բան: Մեզանից շատերը դա չեն գիտակցում, բայց խիղճը տանջում է մեզ, խիղճը թունավորվում է ու այդ թույնը լափում է հոգին, մեր մեջ ոչ սիրտ է մնացել, ոչ հույսեր, ոչ կյանք: Այդպիսին դարձանք մենք՝ պատերազմական սերունդը և սերունդը, որ գալիս է մեզ հաջորդելու: Մենք պարտավոր ենք քավել մեր մեղքը, ազատվել նրանց վրա եղած անեծքից, որոնք արյուն են թափել»[7]: Այսինքն՝ մարդն ինքնըստինքյան մեղսագիտակ է դառնում, հասկանում է, որ հաշվետու է հետագա սերնդի առաջ ու պարտավորված, բայց մեղքը, որ դատապարտելիի շարքում է, քավել նույն դատապարտելի արարքո՞վ: Դ.Հյումը կարծում է՝ ինքնասպանությունը պարտքի խախտում է. «Եթե ինքնասպանությունը դատապարտելի է, ապա այն մեր պարտքի խախտում պետք է լինի կամ Աստծո հետ հարաբերման կամ մեր մտերիմների հետ հարաբերման կամ հենց ինքներս մեզ հետ հարաբերման»[8]: Ըստ Հյումի՝ յուրաքանչյուր անհատի ցանկացած արարք, Աստծո նախախնամությամբ է տեղի ունենում, Աստծո գործի արդյունք է: Տիեզերքում ոչինչ տեղի չի ունենում առանց նրա համաձայնության ու համագործակցության, իսկ եթե անգամ այդպես է,- գրում է Հյումը,- ապա իմ մահը ևս, թեկուզ ինքնակամ, տեղի չի ունենա առանց իր համաձայնության, իսկ քանի որ տանջանքներն ու վիշտը այնքան են չարաշահել իմ համբերությունը, որ կյանքը դարձել է ինձ համար բեռ, ապա ես կարող եմ եզրակացնել, որ ինձ ամենապարզ ու խիստ կերպով դուրս են մղում իմ տեղից[9]:

Պարտքի խախտման վերաբերյալ խոսք չի կարող գնալ, ոչ էլ արարքի դատապարտելիության մասին, եթե նույնիսկ գործվի (վեպի ողջ ընթացքում բացահայտ է հերոսի աթեիստական տրամադրվածությունը), նույնը վերաբերում է նաև մտերիմներին, որոնք դադարել էին մտերիմ լինելուց (ընտանիք, կին, սիրուհի), ինչ վերաբերվում է «ինքներս մեզ»-ին, ապա սա բաբախուն երակ է դառնում. հերոսն ինքն իր հետ հարաբերման մեջ մերթընդմերթ կորցնում է իրեն՝ արտաքին-ներքին, գիտակցական-անգիտակցական աշխարհների խզումներով է պայմանավորվում իր գոյությունը: Ջորջի պարագայում, ինչպես նաև Օլդինգտոնի հերոսներից մեծամասնության, Աստծո հետ հարաբերման ուղին խզված է, ինչպես Դոստոևսկու հերոսի՝ Կիրիլովի դեպքում՝ մեկ բացառությամբ՝ Կիրիլովը, սպանելով իրեն, կամենում է ոչ միայն ընդդիմանալ Աստծուն, այլև իր մահով ապացուցել, որ Աստված չկա, ապացուցել իրեն ու ցույց տալ մյուսներին. «Ես սպանում եմ ինձ, որպեսզի ցույց տամ անհնազանդությունը և իմ նոր, սարսափելի ազատությունը»[10]: Կիրիլովի խնդիրը՝ մահն իբրև մահի հնարավորության որոնում դիտարկելն էր, որը նույնը չէր, ինչ որ ինքնակամ մահը, դա ավելի շատ մահի առաջ կամքի ուժի փորձարկում էր: Իր մահով արդյոք այն հնարավորությունը, որը կանխավ հետապնդում էր, իր չլինելու կարողությունը, որ թույլ էր տալիս ինքն իրենով լինել, այսինքն՝ ինքն իր հետ հարաբերության մեջ ազատ լինել, լինել առանց լինելիության, իրագործվում է: Կարողացավ այնպես անել, որ իր մահը նույնիսկ դառնա

մերժում, թե՞ հակառակը՝ նա մեռավ, բայց այդպես էլ չկարողացավ մեռնել, մահը դատապարտեց նրան չմեռնելու հնարավորության[11]:

Մահն իբրև պատերազմի սարսափներից, անհեռանկար ու ավարտված ապագայից, իր «կորսված» կանանցից հեռանալու հնարավորություն էր դիտարկվում Զորջի կողմից ևս (Հիշենք արձակուրդից վերադառնալուց հետո նրա մտորումները կյանքի անիմաստության, ինչ-որ հրաշքով կյանքն ավարտելու հնարավորության մասին): Դոստոևսկու վեպերում ինքնասպանության թեման ողջ խորքով բացվում է: «Ոճիր և պատիժ»-ում, օրինակ, Սվիդրիգայլովը մահվան է գնում ոչ վիատությունից, ինչպես, օրինակ, «Ապուշ»-ի Իպոլիտը և ոչ էլ փիլիսոփայական գաղափարների երևակայումից, ինչպես «Դևեր» վեպի Կիրիլովը, այլ կյանքի հանդեպ ամեն տեսակ հետաքրքրություն կորցնելու, հոգևոր փակուղու չնահանջող զգացողության, շուրջը կատարվող իրադարձություններից զզվելու, մարդկության մեղսագործ ու ապականված տեսակից խորշելու: Հերոսն, ըստ էության, զգալու ունակությունը կորցնում է, ինքն արդեն կիսատվում է, կյանքը լիարժեք չէ, ինչպես Զորջի պարագայում: Սրանով նա նման է Օլդինգտոնի հերոսին, որը մարդկային տեսակից հիասթափություն է ապրում պատերազմի ընթացքում, որը վախի, զզվանքի, օտարման աղբյուր է դառնում:

Ինքնակամ մահն, ըստ էության, բարոյական պրոբլեմ է առաջ բերում, այն մեղադրում ու քննադատում է, իր մեջ վերջնական վճիռ է կայացնում կամ այն կոչ է ուղղված ներքին, ամենակարող կամքին:

«Իմ մահն եմ գովաբանում ես ձեզ, ազատ մահը, որն ինձ մոտ է գալիս, որովհետև ես եմ ուզում,- գրում է Նիցշեն,- բնական մահը մահն է արհամարհելի պայմաններում, անազատ մահը, անժամանակ մահը, վախկոտի մահը: Ենթադրվում է՝ կյանքի հանդեպ սիրուց այլ մահ պետք էր ցանկալ՝ ազատ, գիտակցված, առանց պատահարի, առանց անսպասելիության.... մենք չենք սպանում մեզ, բայց մենք կարող ենք սպանել մեզ.... երբ մահը կողքիդ է, ապա հնարավոր է դառնում ապրել, կամ հենց մահն է մեզ օդ տալիս, տարածք, շարժման թեթևություն, դա էլ հենց հնարավորությունն է»[12]:

Մահվան հնարավորության թեկուզ մտովի փնտրտուքը իր բացատրելի պատճառներն ունի, Զորջի պարագայում այն հետևյալն էր՝ հերոսը չէր ստանում հասարակությունից ոչինչ, չուներ շարժառիթ ապրելու, ինքը կյանքին տալու բան չուներ ու այդ զգացումը անձի ավելորդության գիտակցումից էր ծնվում, արժե՞ր պահպանել նույնիսկ իր համար արժեզրկված սեփական կյանքը: Այս իմաստով տեղին է հիշել Հյումի ձևակերպումը. «Հասարակության համար բարին կատարելու մեր բոլոր պարտավորությունները ենթադրում են որոշակի փոխադարձում,- գրում է Հյումը,- ես օգտվում եմ հասարակության շահից և այդ պատճառով պետք է ծառայեմ նրա հետաքրքրություններին, բայց եթե ես լիովին խզում եմ հարաբերություններս հասարակության հետ, արդյո՞ք կարող եմ դրանից հետո մնալ պարտավորված: Ու եթե նույնիսկ մեր՝ բարիք գործելու պարտավորությունը չի ավարտվում երբեք, ապա, այնուամենայնիվ, որոշակի սահմաններ ունի: Ես պարտավոր չեմ սեփական անձը վնասելու գնով աննշան բարիք գործել հասարակության համար, այդ դեպքում արժե շարունակել չնչին գոյությունը ինչ-որ աննշան շահի համար, որը հասարակությունը կարող է ստանալ ինձանից: Ես համոզված եմ, որ ոչ ոք երբեք չի հրաժարվել կյանքից, քանի դեռ արժի այն պահպանել»[13]:

Էլիզաբեթի և Ֆաննի Ուելֆորդի հետ հարաբերությունները, որում մոլորվել էր Զորջը, հնարավոր էր և լուծեր, բայց դրա համար փոքր-ինչ համբերություն կպահանջվեր, և՛ էներգիա, և՛ վճռականություն, և՛ ողջամտություն, ինչպես նշում է Օլդինգտոնը, բայց Զորջի սպառված հոգեբանությունը սպասելու ունակ չէ, ոչ էլ ցանկություն ունի

ետ բերելու կանանց, որոնց հետ իրեն կապող այլևս ոչինչ չկա (դրանում համոզվում է արձակուրդի ժամանակ Լոնդոն վերադառնալիս) և ոչ էլ ցանկություն ունի ինտեգրվելու այն հասարակություն, որը տեսավ դարձյալ արձակուրդի ժամանակ:

«Ես գիտեմ, որ ինձ թունավորում է, գուցե այդ թույնը միևնույն է, մնա իմ մեջ, եթե այդպես է, ես այլ ուղի կփնտրեմ, բայց կփնտրեմ….սա մեղքը, թափված արյունը քավելու վիատ փորձ էր: Չգիտեմ՝ ինչն է թունավորում ձեզ, բայց դուք էլ եք թունավորված, գուցե դուք ևս պիտի քավեք ձեր մեղքը»[14]: Զորջի փնտրած ուղին, ըստ էության, մահն է դառնում, իր մահով մեղքը քավելը: Այս ուղին, սակայն, հերոսը գիտակցաբար չի ընտրում (հիշենք վեպի այն հատվածները, որում հիասթափված Զորջը գնդակ է տենչում, որը վերջ կտա իր կյանքին, զենքն իր կողքին՝ ինքը դրան չի դիմում), գուցե մտածելով, որ մեղքը քավելու ելքը մահը չէ:

«Հաճախ մարդիկ չեն մտածում, խուսափում են մահվան մասին մտածել, թերևս - փորձելով թաքնվել, փախչել նրանից, բայց դրանից խուսափել հնարավոր է միայն այն պատճառով, որ մահն ինքնին հավերժական փախուստ է մահից, ամենախորը ապաստարանը,- գրում է Մորիս Բլանշոն,- կարո՞ղ եմ արդյոք ես մեռնել, ունե՞մ ես մեռնելու հնարավորություն: Հենց որ մարդը ամբողջովին կենտրոնանում է ինքն իր վրա, իր մահվան ճակատագրի հավաստիության, այդ ժամանակ էլ նա տարվում է նրանով, որ հնարավոր դարձնի մահը: Իրեն քիչ է մահկանացու լինելը, ինքը հասկանում է, որ պիտի դառնա, մահկանացու լինի կրկնակի, բարձրագույն, առավելագույն աստիճանով»[15]:

«Երբեմն մտածում եմ, որ համաշխարհային պատերազմի այդ վերջին մարտում Զորջը ինքնասպանություն գործեց: Ես չեմ ուզում ասել, որ նա գնդակն արձակեց իր ճակատին, բայց չէ որ վաշտի հրամանատարից չէր պահանջվում ամբողջ հասակով կանգնել հակառակորդի գնդացրային կրակի տակ»[16],- տարակուսում է Օլդինգտոնը: Պատումը վարողի նմանատիպ տարակուսանքի հանդիպում ենք վեպի մեկ այլ հատվածում նույնպես. «Եվ այնուամենայնիվ Զորջի մահվան մեջ ինչ-որ անհասկանալի, գրեթե խորհրդավոր բան կա, արդյո՞ք նա ինքնասպան եղավ»[17]:

Արդյոք ճի՞շտ է, որ ինքնասպանությունը միշտ կատարվում է արդեն մթնած գիտակցությամբ մարդու կողմից, արդեն հիվանդ կամքով, այսինքն՝ իբրև անկամ արարք:

Ըստ է. Դյուրքհայմի՝ «Ինքնասպանություն է կոչվում մահացու յուրաքանչյուր դեպք, որը անուղղակիորեն կամ ուղղակիորեն է անձամբ տուժողի կողմից գործած դրական կամ բացասական արարքի արդյունք է, եթե վերջինս գիտեր դրան հետևող արդյունքների մասին»[18]:

Ընդհանուր առմամբ՝ արարքը չի կարող որոշվել գործող անձի հետապնդած նպատակով, որովհետև միասեռ գործողությունները կարող են վերաբերել ամենատարբեր նպատակների:

Ճիշտ է, համաձայն տարածված կարծիքի, ինքնասպանությունը նախևառաջ մարդու հուսահատության պոռթկում է, որն այլևս չի պահպանում կյանքը, բայց իրականում մարդը մինչև կյանքի վերջին պահը կապված է կյանքին, թեև այդ կապվածությունն էլ չի խանգարում իրեն բաժանվել դրանից: Երբ նվիրումն ինչ-որ բանին հասնում է մինչև քեզ կյանքից զրկելը, ապա գիտական տեսանկյունից այն ինքնասպանություն կլինի՝ նայած, թե որ կատեգորիային պետք կլինի այդ դեպքը դասել:

Այդ հրաժարման բոլոր հնարավոր ձևերի համար ընդհանուր է համարվում այն, որ այդ հրաժարումը խթանող արարքը կատարվում է գիտակցաբար, որ անձամբ զոհը գործողության պահին գիտի իր արարքին հետևող արդյունքի մասին, ինչպիսին էլ որ լինեն իրեն՝ այդ արարքը գործելուն մղող դրդապատճառները: Այդ առանձնահատ-

կությունն ունեցող մահվան բոլոր դեպքերը կտրուկ տարբերվում են նրանցից, որոնցում մարդը կամ իր մահվան գործիքը չի հանդիսանում կամ հանդիսանում է, միայն թե անգիտակցաբար:

Ձորջի պարագայում կանխատեսելի չէր ոչ մի արդյունք, որովհետև սեփական անձը նպատակամիտված վնասելու գործողություն չկար, գուցե նաև մտադրություն, կար ցանկություն, ընդ որում այդ ցանկությունը վերաբերում էր չգոյությանը, անհայտին միանալուն, անզգայանալուն, բայց ինչ-որ այլ ազդակների միջոցով, ըղձական եղանակով ու ոչ սեփական ձեռքով: Գուցե և հերոսին այս դեպքում արիությունը չէր հերիքում, վստահաբար ոչ արդյունքից խուսափելը, որովհետև գիտակցում էր, որ իր արարքի ցանկացած արդյունք արդեն վերաբերելու է միայն իրեն, նույնիսկ չգոյության դեպքում (իր պարագայում ոչ հասարակություն, ոչ ընտանիք, ոչ կանայք):

Սա Դյուրքհայմի նշած զինվորի ինքնասպանությունը չէր. «Զինվորի ինքնասպանությունը սեփական նախաձեռնությամբ և բնույթով արվող է: Զինվորն իրեն կյանքից զրկում է կյանքի հետ առաջին իսկ ամենաչնչին բախման դեպքում, արձակուրդ չստանալու արդյունքում, անհիմն պատժի կամ ծառայության, անհաջողության, սպանում է իրեն անարժեք վիրավորանքի, որպեսական խանդի բռնկման կամ նույնիսկ այն պատճառով, որ իր աչքի առաջ ինչ-որ մեկը վերջ տվեց կյանքին»[19]: Ոչ միայն ամենաչնչին, այլև ամենածանր դեպքերի հետ բախումը Ձորջին չի դրդում այդ քայլին, Թոմսոնի մահը, ընկերների, դիակների հետ նույն օդը շնչելը, անտանելի կենցաղը մի տեսակ ամրացնում են նրան հանուն վրեժի, ինքը դեռ անելիք ուներ, հուսահատությունն այցելում է ուշ ու ոչ այնքան պատերազմական իրավիճակների, արտաշխարհի ազդակների պատճառով, այլ սեփական անձը խորթության, արտաշխարհ-ներաշխարհ կապի խզման պատճառով:

«…. խեղճ Ձորջը 1918-ի նոյեմբերին չափից դուրս տանջված ու չարչարված էր: Նա մի փոքր խանգարվել էր, ինչպես խանգարվել էին գրեթե բոլորը, որոնք կես տարուց ավելի անցկացրել էին առաջին գծում»[20]: Վիրջինիա Վուլֆը «Միսիս Դելլոուեյե վեպում խելագարության և ինքնասպանության թեման առաջադրելով՝ ներկայացնում է նույնպիսի պրոբլեմի առկայությունն իր հերոսի՝ Սեպտիմուսի մոտ, որը, ինչպես և Օլդինգտոնի Ձորջը, պատերազմական սերնդի ներկայացուցիչ է, բայց Վուլֆը, ի տարբերություն Օլդինգտոնի, իր հերոսին բացահայտ խելագարության կոնցեպտում է ներկայացնում: Սեպտիմուսը վերադառնում է պատերազմից, բայց ինքնասպանություն է գործում: Մեծ հաշվով նա էլ, Ձորջն էլ իրենց մեջ մարմնավորում են մահվան մասին չդադարող գաղափարները, արդյունքում երկուսն էլ իրագործում են, բայց տարբեր է իրագործման կերպը: Մահն իբրև ազատագրում պատերազմի մթնոլորտից, հերոսներին մոտեցնում է շոպենհաուերյան փիլիսոփայությանը (այս մասին խոսվելու է ստորև). «Նրա մահը կանչ էր, մահը փորձ էր ընդհանրանալու…. Մտերմությունը վերածվում է բաժանման…. մնում է միայնությունը՝ մահվան գրկում» [21]:

Է.Դյուրքհայմի կարծիքով՝ այդ հոգեբանությամբ մարդը, որը ինքնասպանություն է գործում կամ փորձում կատարել, մոնոման է. «Մոնոմանը հոգեպես առողջ չէ, մոնոմանիան ուղղակի չափազանցված կիրք է տարբեր հակումների շարքում, կեղծ գաղափար պատկերացումների շարքում, բայց այնպիսի ուժի գաղափար, որ տիրապետում է մարդու ուղեղը և այն ամբողջովին ստրկացնում: Այսինքն՝ ինքնասպանությունը ոչ նորմալ կրքի ազդեցությամբ է գործվում, մոնոմանիայի ներքո ինքնասպանությունը դիտարկվում է իբրև խելագարություն»[22]: Բայց, ուսումնասիրելով Դյուրքհայմի առանձնացրած ինքնասպանության ու ինքնասպանություն գործողների տիպերը, ակներև է, որ Ձորջի մահը ինքնասպանություն դիտարկելու դեպքում այն էգոիստական տիպին է

պատկանում (որը գործում էին մտավորականները), իսկ հոգեվիճակը համապատասխանում է մելանխոլիկների ինքնասպանության տիպին. «Մելանխոլիկների ինքնասպանությունը հանդիպում է այն մարդկանց մոտ, որոնք խորը հուսահատության, վշտի մեջ են: Այդ իրավիճակում մարդը չի կարող լիովին սթափ որոշել իր հարաբերությունները իրեն շրջապատող մարդկանց ու իրերի հետ: Իրեն չի գրավում ոչ մի հաճույք, ամեն ինչ սև գույնով է պատկերվում, կյանքը առանց ուրախության ու հոգնեցուցիչ է ներկայանում, այդ վիճակը չի ավարտվում ոչ մի րոպե ու հիվանդի մոտ սկսում է արթնանալ ինքնասպանության մասին չնահանջող միտքը, որը ամուր ֆիքսվում է իր ուղեղում և դրա մոտիվներն անհայտ են մնում»[23]:

Շոպենհաուերի ըմբռնմամբ՝ ինքնասպանությունը վերաբերում է կամքի ժխտմանն իբրև առանձին գաղափար. ինքնասպանը հրաժարվում է միայն անհատականությունից, այլ ոչ թե արտաշխարհից: Նա ինքնասպանությունը լիովին անպտուղ ու խելագար արարք է ներկայացնում. «Ինքնասպանը կյանք է ուզում և բավարարված չէ միայն պայմաններից, որոնցում այն տրված է իրեն: Այդ պատճառով նա հրաժարվում է ամենևին ոչ կյանքի կամքից, այլ հենց միայն կյանքից՝ ոչնչացնելով դրա առանձին դրսևորումը: Նա կյանք է ուզում, ուզում է չխախտված գոյություն ու մարմնի հաստատում, բայց հանգամանքների համակցումը դա թույլ չի տալիս և նրա առաջ մեծագույն տառապանքն է կանգնում»[24]:

Ստացվում է՝ անհատականությունը պատերազմ է հայտարարում ինքն իրեն և լարվածությունը, որով նա կյանք է ուզում և որով նա արտահայտում է դրա խոչընդոտը՝ տառապանքը, իրեն ինքնաոչնչացման է հասցնում, այնպես որ անհատական կամքն ավելի շուտ իր գործունեությամբ ոչնչացնում է մարմինը, իր սեփական արտաշխարհը, քան տառապանքը կոտրում է կամքը (այսինքն՝ Ձորջի պարագայում կամքը չի կոտրվում կյանքին ինքնակամ վերջ տալու աստիճան):

Հենց այն պատճառով, որ ինքնասպանը չի կարող դադարել ցանկանալուց, նա դադարում է ապրելուց, և կամքն այստեղ հաստատում է իրեն հենց սեփական գոյության ոչնչացման ուղիով: Շոպենհաուերյան փիլիսոփայությամբ՝ մահը ազատություն է երկրային տառապանքից, ինքնասպանությունն էլ դառնում է միջոց՝ հասնելու այդ ազատությանը: Այսինքն՝ դարձյալ ներքինի ու արտաքինի պայքար է. ընկրկում է ներքինը, թուլանում է կամքը, իրագործվում է ինքնասպանությունը:

Ինքնասպանությունը միշտ ուսումնասիրվել է բացառապես սոցիալական ֆենոմենի որակով: Քամյուն, ընդհակառակը, ի սկզբանե ինքնասպանությունը քննում է անհատի մտածողության հետ կապերով՝ կարծելով, որ որդը մարդու ներսում է, այնտեղ էլ պետք է փնտրել այն. «Կա ընդամենը մեկ իսկապես կարևոր փիլիսոփայական հարց՝ ինքնասպանության հարցը, որոշել՝ կյանքն արժի, որպեսզի այն ապրեն, նշանակում է պատասխանել փիլիսոփայության հիմնահարցին» [25]:

Քամյուի պատկերացմամբ՝ ինքնակամ մահը ենթադրում է, թեկուզ բնազդաբար, սովորության ուժի ոչնչացում, կյանքի շարունակության ցանկացած պատճառի բացակայության գիտակցում, ամենօրյա թախծի անիմաստության, անօգուտ տառապանքի գիտակցում[26]. «Վերջ տալ կյանքին, նշանակում է խոստովանել, որ կյանքն ավարտված է, որ այն դարձել է անհասկանալի… ուղղակի խոստովանել, որ չարժե ապրել: Կյանքը, բնական է, հեշտ չէ»[27]:

Ըստ էության, ինքնասպանության պատճառը մեկն է՝ տոտալ առումով հիասթափությունը կյանքից, որը վերափոխվում է մահվան թախծի, ինչպես՝ Դյուրգեյմի առանձնացրած էգոիստական ու անոմիկ տեսակների դեպքում:

Ի՞նչը կարող է ինքն իրենից երես թեքած մարդուն ստիպել «փրկության» ցատկ կատարելու: Պատասխանը նոր չէ՝ տառապանքը: Մարդու հոգին երկար փորձության միջով է անցնում ու այդ դժվար ուղու վրա, այնուամենայնիվ, էկզիստենցիայի ձգտող գույն է նշմարվում: Անհատը հայտնվում է հոգեբանական կործանման՝ օտարման մեջ: Օլդինգտոնի հերոսի օտարության խրոնիկան հարազատանում է Քամյուի «Օտար»-ին: Մարդը օտար է ոչ միայն շրջապատող բոլոր մարդկանց, այլև նա լիովին օտար է հենց ինքն իրեն: Նրա անձը լիովին գտնվում է գիտակցությունից առաջ, նա տվյալ պահին տեսնում է, լսում ու զգում, բայց, միևնույն ժամանակ ներկա չէ: Հոգեբանական ժամանակը մասնատվում է ու փաստորեն ոչնչացվում անհատականության միասնականությունը. «Բավական է մեկ աստիճան ներքև իջնել և մենք ընկնում ենք մեզ օտար աշխարհ, նկատում նրա «խտությունը», տեսնում ենք իր անկախությամբ որքան օտար է մեզ քարը, ինչպիսի ինտենսիվությամբ է մեզ մերժում բնությունը, ամենասովորական բնապատկերը»[28]: Ջորջի մահն ավելի շատ ոչ թե ինքնասպանություն, այլ անգիտակցաբար մղում էր դեպի ուրիշ ոլորտ, ուր լուռ է, ուր հեռու է պատերազմական այդ չարիքից, որն իսպառ հոշոտել էր նրան, բայց դժվար է ասել այդ ոլորտը արդյոք մահն էր, համենայնդեպս պատումը վարողն ամեն կերպ փորձում է փրկել Ջորջին, փրկել մահից, ետ պահել ինքնասպանությունից, բայց ինքն էլ համոզվում է, որ Ուինթերբորնի ֆիզիկական գոյն էր մնացել միայն, մահը նրա փրկությունն էր դառնալու: Եվ այդ «փրկությունը» նա սիմվոլիկ կերպով է մոտեցնում հերոսին, որոշակի անորոշությամբ, ինչը, մեր ըմբռնմամբ, միտված է հերոսի մահի անհիմաստությունն ու անգիտակցականությունը ցույց տալու, այսինքն՝ Ջորջը ոչ թե սպանում է իրեն, այլ սպանվում է. «Նա տենչում էր մի բան՝ հանգստություն: Իրեն պետք է, իրեն անհրաժեշտ է հանգիստ: Նա այլևս չի կարող դիմանալ, նրա մեջ ոչ մի կաթիլ ուժ ու էներգիա չի մնացել: Լիներ այն կմախքներից, որոնք պառկած են 91 բարձրությունում, անանուն դիակ, որոնցից այժմ փողոցում շատ են վխտում: Ինքն անգամ բավարար քաջություն չուներ ատրճանակ վերցնելու ու կրակելու իրեն: Սեփական անձի հանդեպ արհամարհանքը վերջին կաթիլն էր, որ իր վիատության բաժակը լցրեց. «Ասես ինչ-որ բան կոտրվեց Ուինթերբորնի ուղեղում: Նա զգաց, որ խելագարվում է և ցատկեց: Գնդացրային կրակահերթը պողպատե մտրակով մոլեգնորեն շրմփացրեց նրա կրծքին: Տիեզերքը պայթեց և մութն ընդգրկեց ամեն ինչ»[29]:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գաղափարաբանությամբ Ջորջը կրում է ինքնասպանությանը բնորոշ հոգեվիճակ, ապրումներ և այլն, բայց չկա արարքը, չկա այդ արարքը գործելու հոգեվիճակը, նա չափից ավելի էր ուժահատ, որպեսզի իրագործեր ցանկությունը՝ չհաշված անկայուն հոգեվիճակին, որն ուղղակի անէացման ուղին էր բռնում, ոչ ինքնասպանության, որոնք այս դեպքում քիչ տարբերությամբ չեն աղերսվում: Ըստ էության, Օլդինգտոնի երկմտանքն ու վերաբերմունքը ու հատկապես վեպի ավարտը վկայում են, որ հեղինակը չի ուզում, որ հերոսն ինքնասպան լինի ու թեև մահը դարձնում է նրա փրկությունը, այնուամենայնիվ, փորձում է փրկել ինքնասպանությունից (Թերևս գրողի անձնական պատմությունն էլ է նպաստում): Ասվածում համոզվում ենք «Բոլոր մարդիկ թշնամիներ» են վեպի հերոսի օրինակով: Օլդինգտոնը Տոնիի ճակատագիրը ճամփի կեսից «շեղում»է, որ ինքնասպանությունից փրկի (այս մասին հանգամանալից կխոսվի 3 գլխում):

Գրեթե նույն պատկերն է ուրվագծում Ռեմարկի հերոսի՝ Պոլ Բոյմերի մահվան հանգամանքը. «Նա սպանվել էր 1918թ-ի հոկտեմբերին, այն օրերից մեկում, երբ ամբողջ ռազմաճակատում այնքան լուռ ու խաղաղ էր, որ ռազմական հաշվետվությունները կազմված էին միայն մեկ արտահայտությունից՝ Արևելյան ռազմաճակատում ա-

ռանց դադարի: Նա ընկել էր բերանքսիվայր և քնածի դիրքով էր պառկած: Երբ նրան տեղաշարժեցին, երևաց, որ նա, պետք է, որ երկար տանջված չլինի, նրա դեմքին այնքան հանգիստ արտահայտություն էր, ասես նա նույնիսկ գոհ էր այն բանից, որ ամեն ինչ ավարտվեց հենց այդպես»[30]:

Պոլն էլ Ջորջի նման իրենց օտարության, ապագայի մտավախության տագնապ ունի. «Մեզ չեն էլ հասկանա, չէ որ մեզանից առաջ կա ավագ սերունդ, որը, թեև այս տարիները մեզ հետ անցկացրել է ռազմաճակատում, արդեն ուներ իր ընտանեկան օջախն ու մասնագիտությունը և այժմ նորից կգբաղեցնի իր տեղը հասարակության մեջ և կմոռանա պատերազմի մասին, իսկ մեզանից հետո սերունդ է մեծանում՝ հիշեցնելով մեզ՝ ինչպիսին էինք մենք նախկինում և նրա համար մենք օտար կլինենք, այն կհեռացնի մեզ ճանապարհից: Մենք պետք չենք ինքներս մեզ, մենք ապրելու ենք ու ծերանալու, ոմանք համակերպվելու են, մյուսները՝ ենթարկվելու ճակատագրին, իսկ շատերն էլ ընտանիք չեն գտնելու»[31]:

Երիտասարդների առջև բավականին լուրջ պրոբլեմ է դրվում՝ ինչպես ապրել իրենց դավաճանած, իրենց չխնայած աշխարհում, որը ապրելու ոչ մի պայման չի ստեղծում ինքնությունը, մարդկության հանդեպ հավատը կորցրած մարդու համար. «Եթե մեզ թույլ տային վերադառնալ այն տեղերը, որտեղ անցել էր մեր երիտասարդությունը, մենք հավանաբար չէինք իմանա՝ ինչ անել այնտեղ»[32],- մտածում է Ռեմարկի հերոսը՝ Պոլը: Ջորջը զգում է այն, ինչ մտածում է Պոլը: Արձակուրդ գնալուց առաջ երկա՛ր մտածում է՝ ինչ է անելու, բայց գնալով՝ նստում ու նայում է կակաչներին ու մարգարտածաղիկներին, լուռ, միայնակ. ոչինչ չունի անելու, ոչինչ առաջվանը չէ[33]:

Եվ իսկապես՝ ինչ է տեղի ունենում Ջորջի մահվանից հետո, ինչպես են հարազատներն ընդունում նրա մահը: Էլիզաբեթի համար կյանքը շարունակվում էր, նոր սիրավեպեր, սիրեկաններ, «Ջորջը ծանձրալի էպիզոդ էր ծանձրալի անցյալից»: Ջորջից հետո յուրաքանչյուրի «մխիթարանքը» տարբեր էր, Ջորջի հայրը սփոփանք գտավ կրոնի մեջ, մայրը՝ իր շեյխի, «անօրինական կապերի» և կոնյակի, Ֆաննին՝ արցունքների ու նկարչի հետ ամուսնության, պատումը վարողը՝ (Ջորջի ընկերոջ կերպարը- Մ.Ս) ոչնչի մեջ սփոփանք չէր փնտրում՝ այդ ժամանակ չհասկանալով, որ Ջորջի մահը անձնապես ինչ-որ կերպ վերաբերում էր իրեն, այդ զգացումը թաքնվեց հոգում ու համբերատար սպասեց, մինչև գա իր հերթը[34]:

«Հերոսի մահը, ինչպիսի ծաղր, ինչպիսի նողկալի կեղծավորություն, գարշելի, ստոր երեսպաշտություն: Ջորջի մահն ինձ համար սիմվոլն է այն բանի, թե ինչքան զզվելի, ստոր ու անպիտան է ամեն ինչ, երիցս նզովյալ անիմաստություն և ոչ մեկին պետք չեկող փորձ»[35],- այս ցավալի համոզմամբ է վեպն ավարտում Օլդինգտոնը: Այս առումով տեղին է հիշել Դյուրքհայմի միտքը. «Կյանքի հետ հաշիվներն ավարտող մարդը հասարակությանը որևէ վնաս չի պատճառում, նա միայն դադարում է բարին կատարել»[36]:

Ամփոփելով վերը ասվածն ու համադրելով ինքնասպանության վերաբերյալ տարաբնույթ փիլիսոփայական, սոցիոլոգիական տեսություններ՝ մտահանգում ենք հետևյալին, որ Օլդինգտոնի հերոսը, ինչպես իր սերնդակիցները, պատերազմի հետևանքով հոգեբանական լուրջ ու անհաղթահարելի պրոբլեմներ է ձեռք բերել. այն է՝ չկայացած կյանքի, կորցրած տարիների ափսոսանք, պատերազմից հետո կյանքի հնարավոր շարունակության, սեփական ես-ի վերագտնման, ես-հասարակություն հարաբերության չիրականացման մտավախություն, մասնագիտական կարողությունների, անձնական կյանքի փլուզում, ինքնության կորուստ, այլևս անպիտան լինելու զգացում:

Կրիտիկական կամ-կամ-ի առաջ հայտնվելով՝ հերոսը հայտվում է ինքնասպանության մտորումների, ինքնասպաններին բնորոշ հոգեվիճակային ապրումների մեջ, բայց, այնուամենայնիվ, անձնասպան չի լինում, որքան էլ արարքին նպաստող բոլոր նախադրյալները, ցանկությունը կար: Օլդինգտոնը փորձում է հերոսի մահը ինքնասպանություն չորակել, փորձում է փրկել, գուցե թույլ, երբեմն հակասական փորձերով, բայց նախընտրում է Ջորջի մահը խելագարության, անգիտակցականորեն դեպի մահը կամ ուղղակի ինչ-որ անհայտի, անէացման ձգտմանն աղերսել:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Затонский Д., Зеркала искусства, М., 1975, стр. 228.
2. Aldington R., Death of a hero, Ottawa, 1998, pp 334-335:
3. Барбюс А., Огонь, М., 1980, стр. 150:
4. Նույն տեղում, էջ 207:
5. Мелик-Саркисова Н., Реализм Анри Барбюса, Саратов, 1960, стр. 35.
6. Aldington R., Death of a hero, p. 135:
7. Նույն տեղում, էջ 24:
8. Юм Д., Сочинения в 2-х томах, том 2, М., 1966, стр. 808.
9. Նույն տեղում:
10. Достоевский Ф., Собр. соч. в 15-ти томах, т. 7, Л., 1990, стр. 577.
11. Իր որոնումներում Կիրիլովն իր անձնական վճռականությունը չի փորձարկում, այլ մահն իբրև պրոբլեմի որոշում առհասարակ: Ուզում է իմանալ կարող է դարձնել մահը իր սեփականը, իրական: Աշխարհում ինքը մահկանացու է, բայց ռիսկի չի դիմում արդյոք մահի, վերջի անվերջության մեջ անվերջանալի մահկանացու լինել:
12. Ницше Ф., Сочинения в двух томах, т. 2, М., 1990, стр. 52.
13. Նույն տեղում, էջ 816:
14. Aldington R., Death of a hero, p. 24:
15. Бланшо М., Пространство литературы, М., 2002, стр. 92. Իբրև մարդ՝ այդպիսին է նրա կոչումը: Մարդկային հեռանկարում մահն այն չէ, ինչ տրված է, այլ այն, ինչ պետք է ստեղծել, դա հանձնարարություն է, որը մենք ակտիվորեն ստանձնում ենք և որը մեր ակտիվության ու ինքնատիրապետման աղբյուրն է դառնում: Մարդը մահանում է, և դա ոչինչ է, բայց մարդը, որը կախված է իր մահից, կա ու ամուր կապված է իր մահին: Մարդն անձամբ է հայտնաբերում այդ կապը. ստեղծում է իր մահը, իրեն մահկանացու է դարձնում ու հենց դրանով իրեն հնարավորություն է տալիս ստեղծելու: Տե՛ս նույն էջում:
16. Aldington R., Death of a hero, p. 12:
17. Նույն տեղում, էջ 170:
18. Дюркгейм Э., Самоубийство: Социологический этюд, М., 1994, стр. 6.
19. Նույն տեղում:
20. Aldington R., Death of a hero, p. 12:
21. Вульф В.. Миссис Дэллоуэй, Москва, Азбука-классика, 2010, стр. 215.
22. Дюркгейм Э., նշվ. աշխ., էջ 13:
23. Նույն տեղում, էջ 15-16:
24. Шопенгауэр А., Мир как воля и представление, Минск, 2005, стр. 640.

25. Камю А., Бунтующий человек, Философия. Политика. Искусство, М.,1990, стр. 2// Миф о Сизифе. Эссе об абсурде// http://nv-shulenina.narod.ru/kamumyth.pdf// 21.10.15.
26. Камю А., Творчество и свобода, М., 1990, стр. 32.
27. Камю А., Бунтующий человек, стр. 2:
28. Նույն տեղում, էջ 6:
29. Death of a hero, էջ 340:
30. Ремарк, На западном фронте без перемен, Санкт Петербург, 2001, стр. 222.
31. Նույն տեղում, էջ 220:
32. Նույն տեղում, էջ 96:
33. Aldington R., Death of a hero, p. 307:
34. Նույն տեղում, էջ 19:
35. Նույն տեղում, էջ 340:
36. Дюркгейм Э., նշվ. աշխ., էջ 815:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մահվան ու ինքնասպանության թեման Ռ.Օլդինգտոնի «Հերոսի մահը» վեպում

Մարիամ Սիրունյան

Կյանքի անիմաստության գիտակցումը, ապագայի տագնապն ու ապրելու անկարողությունը «կորուսյալ սերնդի» կարևորագույն պրոբլեմներից են դառնում: Օլդինգտոնի հերոսը՝ Ջորջ Ուինթերբորնը, բացառություն չէր: Ֆիզիկահոգեբանական բազում դժվարություններ՝ հերոսին կանգնեցնում են լինել-չլինելու անլուծելի դիլեմայի առջև՝ շարունակել պայքարի վերածված կյանքը, թե վերջ տալ կյանքին, ընտրել ինքնասպանությունն իբրև փրկության միջոց: Սույն հոդվածում ներկայացնում ենք ինքնասպանության վերաբերյալ սոցիոլոգիական, փիլիսոփայական, հոգեբանական տեսություններ՝ նպատակ ունենալով համեմատության համատեքստում բացահայտել օլդինգտոնյան հերոսի հոգեվիճակի ու գործելակերպի բնույթը:

РЕЗЮМЕ

Тема смерти и самоубийства в романе Р.Олдингтона «Смерть героя»

Мариам Сирунян

Ключевые слова: *война, «потерянное поколение», дилемма быть или не быть, бессмысленность жизни, потеря личности, самоубийство, смерть, психологическая проблема.*

Осознание бессмысленности жизни, тревога о будущем и неумение жить становятся важнейшими проблемами “потерянного поколения”. Герой Олдингтона Джордж Уинтерборн не исключение. Физико-психологические трудности ставят героя перед неразрешимой дилеммой – быть или не быть, продолжать жизнь или выбрать самоубийство как средство спасения. В данной статье представляем социологические, философские, психологические теории самоубийства, с целью выявления сути душевного состояния и поведения героя Олдингтона.

SUMMARY

The topic of suicide and death in R.Oldington's novel "Death of a Hero"

Mariam Sirunyan

Keywords: *war, "lost generation", dilemma "to be or not to be", meaninglessness of life, loss of identity, suicide, death, psychological problem.*

Meaninglessness of life, trouble for the future and the inability to live become one of the most important problems for the "lost generation". Aldington's hero George Winterbourne was not an exception. The hero faces numerous psychophysical difficulties that make the insoluble dilemma of be or not to be: either to continue life full of fight or to commit suicide as a means of salvation. The article introduces sociological, philosophical, psychological theories of suicide aimed at revelation of Aldington's hero's psychology.